ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

8 օգոստոսի 2011թ. **N_____ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N3385-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ԵՎ «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ կետին, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետին համապատասխան.

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի N 983-Ա, մարտի 26-ի N 1364-Ա և ապրիլի 21-ի N 1655-Ա որոշումների մեջ փոփոխություն կատարելու մասին» N 3385-Ա որոշմանը:

2. Հաստատել «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների քանակական կազմերը՝ յուրաքանչյուրում՝ 5-ական անդամ:

3. Սահմանել, որ Երևան քաղաքի ավագանու կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված յուրաքանչյուր ընկերության խորհրդի կազմում ընտրելու (նշանակելու) համար առաջադրվելու է 1-ական ներկայացուցիչ:

4. Սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերն ուժի մեջ են մտնում «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների փոփոխության պետական գրանցման և ««ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերություններում խորհուրդ ստեղծելու մասին» Երևանի քաղաքապետի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 3385-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ԵՎ «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ Համայնքի ավագանին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն կեսից պակաս:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետի համաձայն՝

Ժողովի իրավասությանն են պատկանում՝ խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

Հաշվի անելով «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների գործունեության առանձնահատկությունները և կարևորությունը Երևան համայնքի համար, դրանց կառավարման և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, Երևան քաղաքի ավագանու և Երևանի քաղաքապետի ներկայացուցիչների կողմից նշված ընկերությունների կառավարմանը մասնակցելու և դրանց գործունեության հիմնական ուղղություններն որոշելու հնարավորություն ընձեռելու նպատակով առաջարկվում է նշված ընկերություններում ստեղծել խորհուրդներ, հաստատել դրանց քանակական կազմերը՝ 5-ական անդամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 3385-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ԵՎ «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3385-Ա որոշմանը համաձայնություն տալու, Երևանի ենթակայության «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների քանակական կազմերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 3385-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ԵՎ «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 2-ի N 3385-Ա որոշմանը համաձայնություն տալու, Երևանի ենթակայության «ՆՈՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ», «ՁԵՎԱՎՈՐՈՒՄ», «Երևաննախագիծ» և «Երքաղլույս» փակ բաժնետիրական ընկերությունների խորհուրդների քանակական կազմերը հաստատելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ